



## Տնտեսական մասի կանոնակարգ

Տնտեսական բաժինն հանդիսանում է քոլեջի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումը:

Տնտեսական բաժինը ենթարկվում է քոլեջի տնտեսական մասի ղեկավարին:

Տնտեսական բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի գործող օրենսդրությամբ, ԱՊԷՔ կանոնադրությամբ, նորմատիվ այլ փաստաթղթերով, տնօրենի հրամաններով ու կարգադրություններով, սույն կանոնակարգով:

Տնտեսական մասն իրականացնում, կորդինացնում և ղեկավարում է ստորև նշված աշխատանքները.

- Նյութատեխնիկական մատակարարում:
- Քոլեջի շենքի պահպանության ապահովում:
- Կաթսայատան աշխատանքի անվտանգության և պահպանության ապահովում:
- Տնտեսական մասն իր աշխատանքը կազմակերպում է հանձնարարված հատվածում աշխատանքի ընթացքի վերաբերյալ աշխատակիցների անձնական պատասխանատվության, նրանց կողմից որոշակի գործառույթների ու առաջադրանքների կատարման հիման վրա:

Աշխատակիցների անձնական պատասխանատվությունն համադրվում է այն խնդիրների կոլեգիալ քննարկումների հետ, որոնք գտնվում են տնտեսական բաժնի լիազորության ներքո:

Տնտեսական բաժնի հիմնական խնդիրները հանդիսանում են՝

- Քոլեջի ստորաբաժանումների տնտեսական սպասարկմանն ուղղված միջոցառումները:
- Տարածքները, շենքերն ու շինությունները պատշաճ վիճակում պահելու համար պայմանների ստեղծումը:
- Պայմանները ուսումնական հաստատությունը սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության նորմերին ու կանոններին համապատասխան պահելու համար:
- Աշխատանքի կազմակերպումն ուսումնական մասի, մասնագիտական խմբերի, առարկայական հանձնաժողովների հետ՝ ուսումնական պրոցեսի կազմակերպման համար համապատասխան պայմաններ կազմակերպելու և պլանավորելու նպատակով:

- Քոլեջի գործունեության բոլոր ուղղությունների գործունեության պահանջմունքի բավարարման համար նյութատեխնիկական մատակարարման ապահովումն և պլանավորումը:
- Քոլեջի շենքի տեխնիկական վիճակի, էլեկտրականության, ջրամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, ինչպես նաև կապի համակարգերի ու ցանցերի կազմակերպման, պլանավորման ու վերահսկողության վերլուծությունը:
- Քոլեջի ամբողջ շենքի և դրա առանձին հատվածների ու շինությունների կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքների մշակումը:

Տնտեսական բաժինը՝

- Ակտիվ մասնակցություն է ունենում քոլեջում կրթական պրոցեսի նյութատեխնիկական և կենցաղային ապահովման աշխատանքներում:
- Կազմակերպում է քոլեջի պահանջմունքների հետ կապված տրանսպորտային սպասարկումը:
- Լուծում է ռեսուրսական հաստատության տնտեսական գործունեության ընթացիկ և հեռանկարային պլանավորման հարցերն ամբողջ սպեկտրում. կապիտալ շինարարության և վերանորոգման, շինարարական և այլ աշխատանքների հետ կապված կապալառու կազմակերպությունների ընտրությունը:
- Համակարգային ձևով ուսումնասիրում է տնտեսական գործունեության համակարգում էներգետիկ, նյութական ռեսուրսների տնտեսմանն ուղղված միջոցառումների մշակման մասին խնդիրը:
- Համագործակցում է քոլեջի այլ ստորաբաժանումների և ծառայությունների հետ:
- Տնտեսական բաժինն աշխատում է կազմված տարեկան պլանի հիման վրա:

Վերանորոգման ընթացիկ աշխատանքներն քոլեջում կարող են իրականացվել տնտեսական բաժնի աշխատակիցների կողմից:

Կապիտալ նորոգումներն քոլեջի շենքում իրականացվում են սեփական ուժերով:

Տնտեսական բաժինը լուծում է էներգետիկ կրիչների խնայողաբար օգտագործման, աշխատակիցների և ուսանողների կենսագործունեության անվտանգության ապահովման խնդիրները:

Քոլեջի տնտեսական բաժնի ղեկավարը պարբերաբար իրականացնում է քոլեջի շենքի տեխնիկական վիճակի դիտարկում, հաստով ուշադրություն է դարձնում ջեռուցման սարքերով ապահովվածությանը, դրանց աշխատանքի արդյունավետությանը,

հակահրդեհային պաշտպանության մակարդակին, անվտանգության շահագործման նորմերին ու կանոններին՝ էլեկտրոցանցերի և էլեկտրական սարքավորումների համապատասխանությանը:



«Արտվածք պատվերի էնթոլոգիայի գրքի» հրատարակում

Հրատարակում է «Արտվածք» հրատարակչությունը